

— Մի՛ մեռնիր, դու մեզի դեռ հարկաւոր ես, վասնզի թէ որ կ'ուզես ապրիլ, պէտք է հրամայես, որ բերդին դռները բանան, եւ ամէն բան առանց կաթիլ մը արիւն թափելու վերջանայ:

— Այդ անկարելի բան է, կը մեռնիմ, սպաննեցէ՛ք զիս, ես այդպիսի հրաման չեմ տալ. Գուրգէնի ոտքը դարձեալ ծանրացաւ յոյնին վրայ, որ ձայն չի հանեց եւ տոկաց քիչ մը ատեն. բայց երբ ոսկորներն սկսան ճարճատիլ,

— Ո՛հ, ո՛հ, անգութ գազան, սպաննեցիր զիս...

— Քու ձեռքդ է ազատութիւն, քու ձեռքդ է մահ,— կ'ըսէր Գուրգէն եւ կը ծանրացներ իր ոտքը:

— Բացէ՛ք, բացէ՛ք դռները, թո՛ղ գան մտնեն շուները,— կը գոչէր խեղդուկ ձայնը:

Վազեցին ան ատեն պահապանք, եւ քանի մը վայրկեան հազիւ անցաւ՝ ահա Իշխանիկը երկու հարիւրի չափ ձիաւորներով կը փութար ներս, եւ երբ տեսաւ Թեոփիլոս գետին տարածեալ Գուրգէնի ոտից առջեւ, արիւնսախառն փրփուր բերանը մարած ինկած եւ որ հազիւ թէ կը շնչէր. սուրերու տրցակ անկիւն մը, որ Վահրիճ կը պահպանէր, Ատոմ եւ Խոսրով որ սուրեր ձեռուընին ծիծաղելով կը խոսէին:

— Այս ի՞նչ տեսարան է, բոլոր այս ի՞նչ կը նշանակն,— կ'ըսէր նա:

— Այս այն կը նշանակէ, պատասխանեց Գուրգէն, որ մենք հեռուանց կարծեցինք թէ իմ բերդիս տէր կանգնող աւազակները մարդ են, մօտ եկանք լաւ դիտեցինք եւ տեսանք, որ մարդու կերպարանքով կապիկներ են, որ եւ ոչ իրենց կայսեր հրովարտակը գիտեն յարգել. ուստի այսպիսի կենդանիներու յարկ համարեցինք վրանին ձեռք չի վերցնել՝ այլ ոտքի տակ ճգմել: Բայց որովհետեւ սա մեզ սպառնացաւ ոտք ձեռք կապած ժայռերն ի վար գլորել, մեզ կը պատկանի հիմա որոշել թէ նոյնը այս անպիտանին պէ՞տք է ընել թէ ոչ. ժամանակ